ՈՒՂԵՑՈՒՅՑ «ԹԱԿԱՐԴ N420» ՖԻԼՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Ֆակտոր տեղեկատվական կենտրոն
2024

Սույն ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինտերնյուս Նեթվորքի ենթադրամաշնորհառու «Ֆակտոր տեղեկատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը (Factor TV), և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
3	ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ
4	ՖԻԼՄԻ ՄԱՍԻՆ
6	ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ
6	ՄԱՍ 1-ԻՆ. ԴԻՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ
8	ՄԱՍ 2-ՐԴ. ԴԻՏԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ
13	ՄԱՍ 3-ՐԴ. ԴԻՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ
14	ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Այս ուղեցույցը մշակվել է «ԹԱԿԱՐԴ N420» ֆիլմի դիտումն ինտերակտիվ դարձնելու և այն քննարկումներով ու հարցուպատասխանի ձևաչափով անցկացնելու համար: Ուղեցույցը կօգնի ձեզ կազմակերպել քննարկումներ, որոնք լսարանի համար կկրեն իրազեկման և կրթական բնույթ: Այս ռեսուրսը հանդիսանում է կրթական նյութ մանկավարժների և մեծահասակների, հասարակական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և թմրանյութերի դեմ պայքարով զբաղվող հաստատությունների համար: Ֆիլմի և ուղեցույցի շահառուները հայաստանաբնակ պատանիներն ու երիտասարդներն են: Առաջնային թիրախում են հանրակրթական, միջին մասնագիտական և բուհական հաստատություններում սովորողները:

Ֆիլմի արտադրման և ուղեցույցի մշակման գաղափարի համատեքստում Հայաստանում թմրանյութերի շրջանառման միտումների զարգացումն է և արատավոր գործընթացի երիտասարդացումը, որն առավել հաճախ թիրախավորում է պատանիներին և դեռահասներին: Ընդ որում, անհանգստացնող է ոչ միայն երիտասարդների կողմից թմրանյութերի օգտագործման, այլև դրանց տարածմամբ և վաճառքով զբաղվելու դեպքերի աճը: Հաճախ այս գործընթացը տեղի է ունենում հենց կրթական հաստատություններում: Այս իրավիճակին դիմակայելու, իրազեկելու և կանխարգելելու նպատակով էլ ստեղծվել է ֆիլմը և դրա օժանդակ նյութ հանդիսացող քննարկման ուղեցույցը:

Նպատակ.

Ուղեցույցի նպատակն է օրինակելի հարցերի միջոցով խթանել ֆիլմի տարբեր հատվածների հիման վրա զգայուն քննարկումների կազմակերպումը: Ֆիլմի բաղադրիչների վրա հիմնված քննարկումների միջոցով մասնակիցները կկարողանան վերլուծել թմրամիջոցների տարածման և օգտագործամն հետևանքները երիտասարդների առողջության, հոգեբանական վիճակի վրա, ինչպես նաև այս միտումների ազդեցությունը պետական մակարդակում անվտանգության և քաղաքական որոշումների վրա:

Օգտագործման ձևաչափ.
Ուղեցույցը ներկայացնում է ֆիլմի 5 թեմատիկ բաժիններին համապատասխան հարցաշարեր, որոնք խթանում են խմբային քննարկումներին և մտքերի փոխանակումը: Այս հարցաշարերը նպաստում են խնդրի մանրամասն ուսումնասիրությանն ու դրա շուրջ վերլուծական մտածողության զարգացմանը: Հարցաշարերը մշակված են ըստ բաղադրիչների և ժամանակային բաժանումների (time coding), ինչը ենթադրում է, որ կրթական նպատակով դիտումը կազմակերպելու համար անհրաժեշտ է պարբերաբար վերցնել դադարներ, քննարկել ուղեցույցում ներառված հարցերը, ապա շարունակել դիտել այն:

Ուղեցույցը նախատեսված է օգտագործել թե՛ ֆորմալ կրթական գործընթացներում, թե՛ դասընթացների կամ սեմինարների շրջանակներում: Ֆիլմի դիտման և քննարկման ընթացքում կարևոր է ապահովել ինտերակցիան և զգայունությունը՝ մշտապես շեշտադրելով թմրամիջոցների բացասական կողմերին առնչվող հարցերը և հիշատակելով, որ կա՛ն իրատեսական լուծումներ:

ՖԻԼՄԻ ՄԱՍԻՆ

Ֆիլմը նպատակ ունի բացահայտել երիտասարդների շրջանում թմրամիջոցների շրջանառության և օգտագործման պատճառով առաջացած խնդիրները, ինչն այսօր դարձել է լուրջ սոցիալական և առողջապահական մարտահրավեր: Այս ֆիլմը վերլուծում է երիտասարդների շրջանում թմրամիջոցների տարածման մեխանիզմների, նրանց վրա ազդեցության և կանխարգելման վերաբերյալ մի շարք հարցեր: Պետական գերատեսչությունների պատասխանատուներն ու ոլորտային մասնագետները ներկայացնում են իրենց դիրքորոշումն ու կարծիքները ստեղծված խնդրի շուրջ: Ֆիլմում իրենց անձնական պատմությունները, ապրումներն ու խոհերն են ներկայացնում նաև թմրամիջոց օգտագործած և այժմ կախվածությունից բուժվող անձինք:

Կոնցեպտուալ առումով այն խաղարկային և վավերագրական լրագրության ժանրերի համադրում է, մտացածին հերոսի շուրջ պտտվող սցենարը ձևավորվում է մարդկային իրական պատմությունների և ճակատագրերի հետնաբեմին և միախառնվում իրական հերոսների պատմություններին:

Ֆիլմի հիմքում 5 կարևոր բաղադրիչներ են, որոնք անդրադառնում են կրթության և առողջապահության ոլորտների, մեդիագրագիտության, պետական մակարդակում անվտանգության և որոշումների կայացման հարցերին:

Կրթության հատվածում անդրադարձ է կատարվում կրթական հաստատություններում սովորողների շրջանում թմրամիջոցների տարածման և օգտագործման մարտահրավերին: Ֆիլմն անդրադառնում է սովորողների իրազեկվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությանն ու այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերին:

Մեդիագրագիտության հատվածում խոսվում է թմրամիջոցների շրջանառման հասանելի, այդ թվում՝ սոցցանցային հարթակների մասին, ինչ մեխանիզմներ են գործում, ինչպես է հնարավոր վտանգները կանխարգելել կամ ռիսկերը մեղմել:

Առողջապահական հատվածում ներկայացվում են թմրանյութերի օգտագործման հոգեբանական և ֆիզիկական հետևանքները: Մանսագետները նշում են կախվածության ռիսկերը և դրանց դեմ պայքարի մեթոդները, նաև վերլուծում են, թե ինչու են Հայաստանում պատանիներն ու դեռահասները խոցելի այս մարտահրավերների նկատմամբ:

Անվտանգության հատվածն անդրադառնում է պետական մակարդակում այս խնդրի լրջության և դրա դեմ պայքարի խնդիրներին, որտեղ շեշտադրվում է արտավոր երևույթի տարածման և ազդեցության ծավալները: Մյուս կողմից, վիճակագրական տվյալները վերահաստատում են փորձագետների

մտավախությունները և անհրաժեշտ քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Պետական քաղաքականության մասում ներկայացվում են պետական մակարդակով ընդունված որոշումներն ու գործողությունները, ինչ ռազմավարություններ և մարտավարաություններ ունի պետությունը թմրամիջոցների տարածման դեմ պայքարում, որքանով են դրանք աշխատում, որքանով՝ ոչ:

ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԱՍ 1-ԻՆ. ԴԻՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Մինչ ֆիլմի դիտումը փորձեք լսարանում քննարկել՝ ինչ գիտեն երիտասարդները թմրամիջոցների բացասական հետևանքների և ազդեցության մասին, ապա գլոբալ համատեքստից փորձեք նեղացնել թեման՝ հասնելով տեղական՝ հայաստանյան մակարդակում առկա մարտահրավերներին: Սա կօգնի հասկանալ և գնահատել երիտասարդների իրազեկվածության մակարդակը: Փորձեք թեման սկսել նման հարցերով.

- Առհասարակ, ի՞նչ գիտեք թմարմիջոցների մասին, ի՞նչ ազդեցություն ունեն դրանք մարդկանց հոգեկան և ֆիզիկական առողջության վրա:
- Գիտե՞ք՝ ինչ է կախվածությունը և ինչպես է այն առաջանում:
- Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ են մարդիկ մի օր որոշում, որ պետք է թմրամիջոց օգտագործեն:
- Իսկ մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր շրջապատում գտնվող մարդիկ փորձեն զերծ մնալ թմրանյութերի օգտագործումից: Ո՞րն է մեր դերը այդ հարցում:
- Ինչպե՞ս կվարվեք, եթե իմանաք, որ ձեր շրջապատում կա մարդ, որն օգտագործում է թմրամիջոց:

Փոքր զրույցից հետո փորձեք ֆիլմի կառուցվածքի հիման վրա իրականացնել մտագրոհ և հավաքել կարծիքներ լսարանից, թե ինչպես են պատկերացնում թմրամիջոցների դեմ պայքարի մեթոդները՝ տարբեր բնագավառներում.

Մտագրոհից հետո կատարեք համառոտ ամփոփում և լսարանին տեղեկացրեք, որ դիտելու եք ֆիլմ, որն անդրադառնում է այս հարցերին: Նաև հուշեք, որ ֆիլմը դիտելու եք որոշակի դադարներով, որոնց ընթացքում կրկին բարձրացնելու եք որոշակի հարցեր՝ քննարկում կազմակերպելու նպատակով:

ՄԱՍ 2-ՐԴ. ԴԻՏԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ֆիլմի ընթացքում պետք է լինեն որոշակի դադարներ՝ ստորև բերված աղյուսակում ներկայացված օրինակելի հարցերը քննարկելու նպատակով: Դուք ազատ եք դրանք փոփոխել, սակայն խորհուրդ է տրվում առաջնորդվել այս հարցաշարով: Հարմարավետության համար առանձնացված են ֆիլմի ժամանակաչափերը, որպեսզի հեշտորեն կողմնորոշվեք՝ երբ վերցնել դադար և քննարկել որոշակի շրջանակի հարցեր:

N	Մեկնարկի ժամ	Դադարի ժամ	Տևողություն	Օրինակելի հարցեր
1	00:00	03:00	3 րոպե	1. Ինչո՞ւ է երիտասարդը որոշում նկարել պատին փակցված պաստառը: 2. Ի՞նչ եք կարծում կա՞ տարբերություն թմրանյութերի օգտագործման և դրանք չօգտագործելու, բայց տարածելու և շրջանառելու գործողությունների միջև: 3. Ի՞նչ կապ կա թմրամիջոցների օգտագործման դեպքերի մեծացման և պետական մակարդակում անվտանգության հարցերի միջև:
2	03:01	05:23	2 րոպե 22 վայրկյան	1. Որքանո՞վ են Ֆիլմում երիտասարդների կողմից թվարկվող թմրամիջոցների օգտագործման պատճառները հիմնավոր (երջանկության պակաս, իրականությունից փախնել, արվեստ, մոաա և մոտիվացիա, բուլինգ դպրոցում, ընտանեկան բռնություն, ինքնահաստատում): 2. Որո՞նք են այն ճգնաժամային իրավիճակները, որոնց պատճառով դեռահասները սկսում են թմրամիջոցներ օգտագործել: 3. Ի՞նչ կարող ենք անել մենք նման դեպքերը կանխարգելելու համար: 4. Արդյո՞ք Ֆիլմում նշված գործողությունները՝ ոստիկանների և քննիչների մասնակցությամբ դասաժամեր, «Առողջ ապրելակերպ» դասընթաց, բավարար են՝ իրազեկելու և կանխարգելելու համար: 5. Ինչո՞ւ է Ֆիլմի երիտասարդներից մեկը՝ որպես նման դասընթացի շահառու, պնդում, որ երիտասարդներն անլուրջ են վերաբերվում նման հանդիպումներին:

N	Մեկնարկի ժամ	Դադարի ժամ	Տևողություն	Օրինակելի հարցեր
3	05:24	09:20	3 րոպե 56 վայրկյան	1. Ինչո՞ւ է թմրանյութերի օգտագործման դեպքերի վիճակագրությունն ի վնաս տղաների: Արդյո՞ք սա պայմանավորված է նաև սեռով: 2. Ի՞նչ եք կարծում ինչպես կարելի է ճշգրտել մեր շրջապատում գտնվող երիտասարդի կասկածելի վարքի պատճառը, և եթե այն թմրամիջոցների օգտագործումն է՝ ինչ անել: Ֆիլմում ոստիկանության ծառայողն առաջարկում է երկու տարբերակ՝ 1) դիմել իրավապահ մարմիններին, 2) տեղեկացնել ծնողներին: Ո՞ր տարբերակին եք հակված կամ գուցե կառաջարկեք ա՞յլ տարբերակ: 3. Ի՞նչ հիշեցիք Քրեական օրենսգրքի 393 հոդվածից: 4. Ինչո՞ւ է Ֆիլմում թմրանյութ օգտագործած անձը կարևորում սերը, հարգանքը, փոխադարձ վստահությունն ու ծնողների հետ շատ շփումը երիատսարդների համար:
4	09:21	13:49	4 րոպե 28 վայրկյան	1. Ի՞նչ գործողություններ կձեռնարկեք, եթե ձեր տարածքում գտնվող շինությունների պատին տեսնեք անհայտ ծագման գովազդներ, որոնք ուղղորդում են Telegram-ի ալիքներ: 2. Որտեղի՞ց և ի՞նչ ճանապարհով են երիտասարդները ձեռք բերում գումար՝ թմրանյութերի գնման նպատակով: 3. Ինչպե՞ս կարծագանքեք կամ ի՞նչ գործողություններ կձեռնարկեք, եթե ծանոթ կամ անծանոթ մարդուց թմրանյութերի ձեռքբերման առաջարկ ստանաք: 4. Սոցիալական մեդիայում ձեզ հանդիպո՞ւմ է թմրանյութերի վաճառքի գովազդ. որո՞նք կլինեն ձեր գործողությունները: 5. Կիսո՞ւմ եք Ֆիլմում խոսող երիտասարդներից մեկի կարծիքը, որ սերիալներում և ֆիլմերում թմրանյութը և դրա օգտագործումը ռոմանտիզացվում է:

N	Մեկնարկի ժամ	Դադարի ժամ	Տևողություն	Օրինակելի հարցեր
4	09:21	13:49	4 րոպե 28 վայրկյան	6. Կցանկանայի՞ք, որ այս թեմայով դասերից/հանդիպումներից որևէ մեկին ներկա լիներ նախկինում թմրանյութ օգտագործած անձ, ով կկիսվեր իր պատմությամբ: Ի՞նչ եք կարծում դա կօգնի՞ կանխարգելել և երիտասարդների ուշադրությունը հրավիրել բացասական հետևանքների վրա:
5	13:50	19:38	5 րոպե 48 վայրկյան	1.Ինչի՞ մասին են վկայում Ֆիլմում հնչած վիճակագրական տվյալները: Ի՞նչ տեղի կունենա, եթե թմրանյութերի շրջանառման ծավալները մեծանան և ինչպե՞ս է դա կապվում ազգային անվտանգության հետ: 2.Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի պետությունը թմրամիջոցների դեմ պայքարում: 3.Ինչպե՞ս են թմրամիջոցները հասնում Հայաստան, ինչո՞ւ են դրանք հիմա ավելի մատչելի, քան նախկինում: 4.Սինթետիկ թմրամիջոցների պարագայում քանի՞ օգտագործումից է անձի մոտ սկսվում հոգեբանական և ֆիզիկական կախվածություն: 5.Ինչո՞ւ են թմրանյութ օգտագործած աշակերտները փոխում իրենց դպրոցը. անտեսվա՞ծ են շրջապատի և ընկերների կողմից, բուլինգի՞ են ենթարկվում, թե՞ այլ պատճառ կա:
6	19:39	27:06	7 րոպե 27 վայրկյան	1.Ի՞նչ եք կարծում մարիխուաննայի օրինակացումը կարո՞ղ է որևէ կերպ նվազեցնել թմրանյութերի օգտագործման և շրջանառման վիճակագրությունը: Արդյո՞ք դա նույնպես հոգեմետ միջոց չէ: 2. Ըստ մասնագետի, հետազոտական ի՞նչ եզրակացություններ կան այլ երկրներում, որտեղ մարիխուաննայի օգտագործումն օրինականացված է (ուղեղի զարգացման հապաղումներ, փսիխոզներ):

N	Մեկնարկի ժամ	Դադարի ժամ	Տևողություն	Օրինակելի հարցեր
6	19:39	27:06	7 րոպե 27 վայրկյան	3. Ի՞նչ կանեիք Հայկի ընկերոջ փոխարեն, արդյո՞ք վերջինիս գործողությունները բավարար են՝ որպես աջակցություն: 4. Գիտեի՞ք, որ Հայաստանում կա կախվածությունների բուժման ազգային կենտրոն, որն անվճար հիմունքներով աջակցում է նման իրավիճակում հայտնված մարդկանց: 5. Ֆիլմի հերոսներից մեկը պատմում է, որ թմրանյութի ազդեցության տակ, անգամ ամենահարազատ մարդը դառնում է մեր «աչքի գրողը»: Ի՞նչ հետևություններ կարող ենք անել սրանից, ինչի՞ է հանգեցնում թմրանյութերի օգտագործումը: 6. Ըստ Ֆիլմի հերոսների նկարագրության՝ ինչպիսի՞ն են թմրամիջոցների օգտագործման հետևանքները/զգացողությունները (ցավեր, հոգեկան ապրումներ, անքնություն, մթագնում, խոսելու անկարողություն, տեսիլքներ): 7. Ինչպե՞ս է հերոսներից մեկը նկարագրում թմրանյութերի օգտագործման նպատակով գումարի ձեռքբերման եղանակները (ծնողներից վերցնել, դպրոցից հավաքել, խարդախություն և գողություն անել): Ի՞նչ եզրակացություններ կարող ենք անել:
7	27:07	32:07	5 րոպե	1. Արդյո՞ք մարդու ինտելեկտուալ մակարդակը և գիտելիքները երաշխիք են, որ նա երբեք չի հայտնվի թմրամիջոցների թակարդում կամ գոնե մեկ անգամ այն չի փորձի: 2. Արդյո՞ք թմրանյութի միջոցով մարդիկ լուծում են իրենց անձնական խնդիրները, թե՞ դրանք աննշան են դառնում, երբ առաջնային պլան է գալիս կախվածության խնդիրը: 3. Արդյո՞ք անվտանգ է առանց բժշկի կողմից դրված դեղատոմսի հանգստացնող դեղամիջոցների ձեռքբերումը և դրանց ինքնուրույն ներարկումը:

N	Մեկնարկի ժամ	Դադարի ժամ	Տևողություն	Օրինակելի հարցեր
7	27:26	31:40	5 րոպե	4. Ֆիլմում նշվում է, որ շատերը չեն դիմում բուժման՝ վախենալով խարանից: Ինչպե՞ս կարող ենք մենք օգնել և ապրամակցել նման մարդկանց: 5. Ի՞նչ ի նկատի ունի Ֆիլմի հերոսներից մեկը, երբ ասում է, որ ամենակարևորը մտքի բուժումն է:
8	31:41	34:27	2 րոպե 46 վայրկյան	1. Ի՞նչ է տեղի ունենում Ֆիլմի կերպարային հերոսի՝ Հայկի հետ: 2. Ի՞նչ է խորհրդանշում Ֆիլմի սկզբում, ընթացքում և վերջում փորվող գերեզմանը, ո՞րն է դրա ուղերձը: 3. Ինչո՞ւ է Հայկը նորից հայտնվում այն նույն կադրում, որտեղ Ֆիլմի սկզբում էր, սակայն այս անգամ պատռում է պատին փակցված պաստառը: 4. Ինչի՞ մասին են երիտասարդները երգում Ֆիլմում:

ՄԱՍ 3-ՐԴ. ԴԻՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ֆիլմի ավարտից անմիջապես հետո վերադարձեք մտագրոհի նույն պրիզմային և կատարեք նույն գործողությունները: Սա կօգնի, որպեսզի գնահատեք լսարանի իրազեկվածության մակարդակի փոփոխությունը՝ ֆիլմի դիտումից առաջ և հետո, ինչ նոր կարծիքներ ու դիրքորոշումներ են ի հայտ եկել, ինչպես են փոխել երիտասարդներն իրենց վերաբերմունքը խնդրի շուրջ և ինչ նոր լուծումներ ունեն:

Սա ռեֆլեքսիոն գործընթաց է, երբ հետահայաց անդրադարձ է կատարվում թեմային՝ նոր տեղեկատվության ստացումից հետո: Այն օգնում է ամրապնդել գիտելիքները և ինքնուրույն գնահատել՝ իմացածի և նոր սովորածի արդյունքները, տանել համեմատականներ և հասկանալ՝ որտեղ էինք ճշմարտացի, որտեղ՝ ոչ:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կախվածությունների բուժման ազգային կենտրոն	Վեբ կայք՝ www.ncat.am/ Հասցե՝ Աճառյան փող. 2-րդ փակուղի, 2 շենք (Ավան վարչ. շրջան) Հեռախոսահամար՝ +374 10 617090 Էլ. փոստ՝ addictions.arm@gmail.com
Հայաստանի առողջապահության նախարարություն	Վեբ կայք՝ www.moh.am Հասցե՝ Երևան 0010, կառավարական տուն N 3 Տեղեկատու հեռախոսահամար՝ (+374 60) 80 80 03 /2304 Թեժ գիծ՝ 8003 Էլ. փոստ՝ info@moh.am
ՀՀ ոստիկանություն	Վեբ կայք՝ www.police.am Թեժ գիծ՝ 1-02 Հեռախոսահամար՝ +374 10 54-69-14
Media.am - Մեդիագրագիտության ռեսուրսներ	Վեբ կայք՝ www.media.am/hy/category/medialiteracy/